«Հ Ա Ս Տ Ա Տ ՈՒՄ ԵՄ»

**ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,**

**ոստիկանության գեներալ-լեյտենանտ**

**_____ Հովհ.Վարյան**

**«  » _____ 2018 թ.**

# Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ՝ ՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդին կից՝ ստրատեգիական պլանավորման և որակի ապահովման Հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) ձևավորման կարգը, խնդիրները, նիստերի նախապատրաստման և աշխատանքների անցկացման կարգը:

1.2. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությանը, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կանոնադրությանը, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի կանոնակարգին, սույն կանոնակարգին ու այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

1.3. Հանձնաժողովի կազմը ձևավորվում և փոփոխվում է գիտական խորհրդի որոշմամբ:

1.4. Հանձնաժողովը գործում է մինչև գիտական խորհրդի լիազորությունների ժամկետի ավարտը: Գիտական խորհրդի որոշմամբ Հանձնաժողովը կարող է վերակազմավորվել կամ լուծարվել նախքան գիտական խորհրդի լիազորությունների ժամկետի ավարտը:

2. **Հանձնաժողովի խնդիրներն են՝**

2.1. Հանձնաժողովի գործունեության տարեկան պլանավորումը.

2.2. Կրթահամալիրի գործունեության ստրատեգիական պլանավորմանը և որակի ապահովմանը վերաբերող հարցերի ուսումնասիրումը և իրավիճակի վերլուծությունը.

2.3. Կրթահամալիրի գործունեության ստրատեգիական պլանավորմանը և որակի ապահովմանը վերաբերող խնդիրների հայտաներումը, դրանց լուծման ուղղությամբ առաջարկությունների մշակումը և դրանք ներկայացնելը.

2.4 Կրթահամալիրի գործունեության ստրատեգիական պլանավորմանը և որակի ապահովմանը վերաբերող ներքին իրավական ակտերի նախագծերի մշակումը և դրանք հաստատմանը ներկայացնելը:

**3. Հանձնաժողովի նախագահը՝**

3.1. Հաստատում է Հանձնաժողովի նիստի օրակարգը և վարում Հանձնաժողովի նիստը.

3.2 Ստորագրում է Հանձնաժողովի արձանագրությունը.

3.3 Հսկում է Հանձնաժողովի գործունեության տարեկան պլանով նախատեսված միջոցառումների և ընթացիկ հանձնարարությունների կատարումը.

3.4 Ներկայացնում է Հանձնաժողովը կրթահամալիրի այլ ստորաբաժանումների հետ հարաբերություններում.

3.5 Առանձին հարցերի քննարկման նպատակով Հանձնաժողովի նիստին հրավիրում է համապատասխան մասնագետների և փորձագետների:

3.6 Գիտական խորհրդում ներկայացնում է Հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը կամ դա հանձնարարում է Հանձնաժողովի անդամներից մեկին:

3.7. Սույն կանոնակարգին և նորմատիվ իրավական ակտերին համապատասխան լուծում է Հանձնաժողովի գործունեության հետ կապված այլ հարցեր:

**4. Հանձնաժողովի քարտուղարը՝**

4.1. Նախապատրաստում է Հանձնաժողովի նիստերը.

4.2. Կազմում է Հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը և այն ներկայացնում է Հանձնաժողովի նախագահի հաստատմանը.

4.3. Հանձնաժողովին զեկուցում է Հանձնաժողովի գործունեության տարեկան պլանով նախատեսված միջոցառումների և ընթացիկ հանձնարարությունների կատարման վերաբերյալ.

4.4. Կազմում և Հանձնաժողովի նապագահի հաստատմանն է ներկայացնում Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները՝ նիստից ավարտից հետո եռօրյա ժամկետում:

## 5. Հանձնաժողովի նիստերի նախապատրաստումը

5.1. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության՝ Հանձնաժողովի նախագահի որոշմամբ:

5.2. Հանձնաժողովի նիստերը նախապատրաստում է Հանձնաժողովի քարտուղարը:

5.3. Հանձնաժողովի անդամները Հանձնաժողովի նիստի հրավիրման և դրա օրակարգի մասին քարտուղարի կողմից տեղեկացվում են նիստից առնվազն երկու օր առաջ:

## 6. Հանձնաժողովի նիստերի անցկացումը

6.1. Հանձնաժողովի նիստն իրավազոր է Հանձնաժողովի անդամների առնվազն կեսի ներկայության դեպքում:

6.2. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է Հանձնաժողովի նախագահի ձայնը:

6.3. Հանձնաժողովի նախագահը, բացելով նիստը, հայտարարում է քվորումի առկայությունը:

6.4. Հանձնաժողովի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր, որոնք դրվում են քվեարկության:

6.5. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն Հանձնաժողովի արձանագրության մեջ մտցնել հատուկ կարծիք:

## 7. Եզրափակիչ դրույթ

Սույն կանոնակարգի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարվում են Հանձնաժողովի որոշմամբ և հաստատվում ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի կողմից: